




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԵՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-
սանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ Կաթու-
ղիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագ-
գական Նախամեծար Աթոռոյ Առաքեալն առաքելական
Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի

Գերապատիւ Տ. եփրեմ, Տ. Բագրատ, Տ. Մատթէոս
եպիսկոպոսաց եւ բարձրապատիւ Տ. Տ. Գարեգին, Բարդէն,
Վրթանէս վարդապետաց, հարազատ որդւոց Մայր Աթո-
ռոյս ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական:

Դարձեալ լսեմք ի Հայաստան աշխարհէ զողբս եւ զա-
ղաղակս անօգնական եւ անպաշտպան սիրելի զաւակացս:
Գիտէք արդէն, զի ի վերջին աւուրս յանկարծակի թշուա-
ռութիւնք եւ սոսկալի արհաւիրք եկին հասին ի վերայ զա-
ւակացս, յորոց բազումք թողեալ զհայրենի տունս եւ զա-
մենայն ստացուածս իւրեանց ի Տաճկա-Հայաստանի եւ
յԱտրպատականի, սարսափահար եւ խեղակորոյս լեալ, վախ-
եան ի սահմանս մեր եւ այսօր հազարաւոր թշուառ կա-

նայք և անմեղ մանկունք և ծերք, ժողովեալք աստ ի Ս. Էջմիածին, ընդ հովանեաւ Մայր Աթոռոյս, խնդրեն ի Մէնջ օգնութիւն:

Յանկացեալ Մեր ընդ փոյթ հասանել յօգնութիւն արկածելոց, դիմեցաք առ պարտաճանաչ հոգևոր որդիս մեր, յորոց ոմանք շարժեալի ի մարդասիրական և յեղբայրսիրական վեհ զգացմանց, ազնուաբար արկին զլուծայս իւրեանց յազգային գանձանակ վասն փրկելոյ զկեանս արկածելոց և տառապելոց:

Արդ՝ անհրաժեշտ համարելով զկազմակերպումն քրիստոնէական օգնութեան վասն հազարաւոր գաւակացս, այսու Հայրապետական Կոնդակաւս նշանակեմք զՁեզ անդամս Կարգադիր Յանձնաժողովոյ Եղբայրական օգնութեան ընդ անմիջական հսկողութեամբ և տնօրէնութեամբ Մերով և պատուէր տամք Ձեզ կատարել զպետագայս:

Ա.) Փութով ժողովել ի մի զամենայն տեղեկութիւնս զհայ գաղթականաց, որք ի պատճառս Ռուս-Տաճկական պատերազմի, թողեալ են զտունս և զստացուածս իւրեանց և գտանին ի թշուառ կացութեան, ցրուեալք յայլ և յայլ տեղիս:

Բ.) Քննել ի ձեռն մասնաժողովոց, ներկայացուցչաց և փտահելի անձանց զվիճակ նոցա և զհետեանացն յայտ առնել Մեզ ի տնօրէնութիւն:

Գ.) Մտանել ի բանակցութիւն ընդ Յանձնաժողովս Եղբայրական օգնութեան, հաստատեալս Կոնդակօք Մերովք ի գանազան քաղաքս, տալով նոցա զկարևոր տեղեկութիւնս վասն գաղթականաց և խնդրելով ի նոցանէ զտեղեկագիրս գործունէութեան իւրեանց, մատուցանել Մեզ ի գիտութիւն:

Դ.) Միաւորել զգործունէութիւնս ամենայն Յանձնաժողովոց Եղբայրական օգնութեան և, ի զէպս անհրաժեշտութեան, նախապէս ընկալեալ ի Մէնջ կարևոր հրահանգս, հրաւիրել աստ ի Ս. Էջմիածին գներկայացուցիչս նոցա ի խորհրդակցութիւն՝ վասն որոշելոյ զընդհանուր սկզբունս գործունէութեան յօգուտ գաղթականաց:

Ե.) Խորհրդակցել պարբերաբար ընդ ներկայացուցիչս

մերձակայ քաղաքացի և սահմանագլուխ աւանից վասն կանոնաւորապէս պահպանելոյ և բնակեցուցանելոյ զգաղթականս ի շրջակայ գիւղօրայս, յայսմ ցրտաղին եղանակի.

2) Խնամել ըստ ամենայնի և տալ նոցա զբժշկական օգնութիւնս, սփռիւել և միւլթարել զնոսա հոգեպէս:

է) Ստանալ ի Սինօդէ Ս. Էջմիածնի զժապաւինեալ մատեան և պահել զամենայն հտշիւս կանոնաւորութեամբ և կանխագոյն թոյլտուութեամբ Մերով ստանալ ի գանձապահէ Մայր Աթոռոյս զանհրաժեշտ զրամս ի նուիրատուութեանց յօգուտ գաղթականաց:

Լիայոյս եմք, զի Դուք, որդեակք հոգեւորք, առաջի աչաց ունենալով զողբալի և զյուսահատ վիճակ և զսոսկալի տառապանս գաղթականաց մերոց, գործեսցիք ամենայն եռանդեամբ և անձնուիրութեամբ ի թեթեացումն ազգային աղէտից:

Լիայոյս եմք նոյնպէս, զի գերապատիւ Առաջնորդք, Յանձնաժողովք Եղբայրական օգնութեան, ազգային գործիչք մեր, բարեգործք և կարողաւորք յամենայն կողմանց փութով օժանդակեսցեն նուիրատուութեամբք իւրեանց վասն զժբախտ գաղթականաց մերոց:

Աղօթեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս Հայոց յամենայն վտանգից և ի փորձութեանց:

Ողջ լիւրութք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և օրհնեալ ի մէնջ Ամէն:

Ի վերայ իսկականին ստորագր. **Պ Ե Ո Ր Պ Ե**. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ի 28 գեկտեմբերի 1914 ամի

ըստ Տոմարիս ՌՅԿԴ

Ի Հայրապետութեան մերում Դ. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.

Ի Վաղարշապատ

Թ. 1990